


3  
209 54606  
Ա. ԲՈՒԶԴԵՍ 1

**Դ Ե Պ Ք Ե Ր Ը  
Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա Յ ՈՒ Մ  
Յ Ե Վ Ա Վ Ա Տ Ր Ի Ա Յ ՈՒ Մ**

**Պ Ե Տ Հ Ր Ա Տ**

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1938**



Ա. ԲՈՒԶԴԵՍ

9(43)  
F


# ԴԵՊՔԵՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ ՅԵՎ ԱՎՍՏՐԻԱՅՈՒՄ

A  $\frac{I}{2341}$



Պ Ե Տ Հ Ր Ա Տ  
ԲԱՂԱԲԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ ● 1938





А. БУЗДЕС  
СОБЫТИЯ В ГЕРМАНИИ  
И АВСТРИИ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1938



Ֆաշիստական Գերմանիան համաշխարհային պատերազմի գլխավոր հրձիգն է: Վերջին ժամանակներում Կենտրոնական Յեվրոպայում ծավալված դեպքերը հաստատում են այդ: Նրանք գերմանական ֆաշիզմի աճող ազդեցիկության ցուցանիշն են հանդիսանում, ֆաշիզմի, վորը քափ-քրտինք մտած ձգտում է համաշխարհային նոր պատերազմ սանձալուծ անել աշխարհը վերաբաժանելու համար:

Ի՞նչպես էլին զարգանում դեպքերը Կենտրոնական Յեվրոպայում, առաջին հերթին Գերմանիայում և Ավստրիայում, և ի՞նչ են դրանք նշանակում:

1938 թ. փետրվարի 5-ին Ֆաշիստական մամուլը Գերմանիայի բնակչությանը և ամբողջ աշխարհին ազդարարեց մի «ուրախ» դեպքի մասին՝ Հիտլերն ամբողջ քաղաքական, ռազմական և տնտեսական իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքերում: Նա իր վրա վերցրեց Գերմանիայի բոլոր զինված ուժերի ղեկավարությունը: Գյոթլինգը ստացավ գեներալ-ֆելդմարշալի աստիճան: Ռազմական մինիստրությունը վերակազմվել է՝ գեներալ-ֆելդմարշալ Բլոմբերգը, Գերմանիայի ռազմական նախկին մինիստրը Հիտլերի իշխանության գլուխ անցնելու օրվանից, և գեներալ-գեդապետ Ֆրիչը, բանակի գլխավոր հրամանատարը, հանված են իրենց պոստերից:

Հասկանալի չէ, Հիտլերյան կառավարությանը «ցանկալի չէր» հրաժեշտ տալ այդ գեներալներին:

Բայց նրանց ծեր հասակը և առողջության վատ վիճակը թելադրեցին Հիտլերին իրենց դրաված պաշտոններից նրանց ազատելու անհրաժեշտությունը։ Այսպես էլին ջանում քաջատրեւ այդ բանը ֆաշիստական ջրագրերը։

Հիտլերը հատուկ նամակներով դիմեց այդ յերկու դեներալներին, «ցավելով», վոր ստիպված է լինում նրանց ազատել աշխատանքից։ Բլումբերգին գրած դիմումի մեջ Հիտլերը գրում է. «Ռադմական և տերիտորիալ տեսակետից Գերմանիայի լիակատար սուվերենության՝ 1936 թ. կատարված վերականգնման ժամանակից սկսած, դուք միջանի անգամ խնդրել եք ինձ ազատել ձեզ ձեր դրաված պաշտոնից, վորը ծանր պահանջներ է դնում ձեր առողջության առաջ։ Այժմ, մեր ժողովրդի և նրա զինված ուժերի վերականգնման հինգ տարին վերջանալուց հետո, յես ուղում եմ բավարարել ձեր նորից կրկնած խնդիրը»։

Հատկապես բնորոշ է Հիտլերի դիմումը նախկին գլխավոր հրամանատար Ֆրիչին, դիմում, վորը մենք բերում ենք ամբողջովին.

«Խնկատի ունենալով ձեր առողջության վատ վիճակը, դուք հարկադրված եք յեղել խնդրելու ինձ ազատել ձեզ ձեր դրաված պաշտոնից։ Քանի վոր ձեր վերջերս հարավում ապրելը սպասված հետևանքները չափեց, յես վորոշեցի կատարել ձեր խնդիրը։

Ոգտվում եմ բանակում ձեր ունեցած իսկական ծառայությունից հեռանալու հանգամանքից նրա համար, վորպեսզի խորը յերախտադիտությամբ նշնո՞՞վ ձեր աչքի ընկնող ծառայությունները բանակը վերականգնելու բնագավառում, վորովհետեւ ձեր անունը



պատմականորեն առհավետ կապված կլինի գերմանական բանակի հղորդւթյան այս վերանորոգման և վերականգնման հետ 1935 թ. մարտից մինչև 1938 թ. փետրվարը ընկած ժամանակամիջոցում»:

Այս դիմումներին նայելով, կատարված տեղափոխումները վոչինչ արտասովոր բան չեն ներկայացնում, և Ֆաշիստական Գերմանիայում ամեն ինչ կարգին է: Պետք եր փոխարինել այդ գեներալներին: Այդ մասին նույնպես հոգաց «Ֆյուրերը»:

Ձաք լեզուները տարածեցին ելի մեկ, հենց նույնքան «ստույգ» վերսիա ռազմական մինիստր Բլոմբերգին հրաժարեցնելու պատճառների մասին: Բացի ծեր հասակից (60 տարեկան) և առողջության վատ վիճակից այս գործում ճակատագրական դեր խաղաց իբր թե նրա հարսանիքը:

Պրուսական ադմիալանության հին տրադիցիաների համաձայն Ֆելդմարշալը պետք է իրեն կին ընտրի միմիայն իր խավի շրջանից: Բայց Բլոմբերգն ամուսնացել է 29 տարեկան իր քարտուղար Գրյունի, արհեստավորի աղջկա հետ: Այս բանը հակասում է հին պրուսական ռազմական կաստայի տրադիցիաներին: Գերմանական բանակում սպաների, նամանավանդ բարձր դիրք գրավողների նման ամուսնություններ չեյին թույլատրվում: Ոգտվելով այս առիթից, ռայխսվերը պահանջեց Բլոմբերգի հրաժարականը: Ռայխսվերի գեներալները բողոք հայտնեցին այն առթիվ, Վոր Հիտլերը և Գյորինգը ներկա էյին Բլոմբերգի հարսանիքին: Բայց այժմ, Հիտլերի կարգադրությամբ, Բլոմբերգը հրաժարեցված է: Դրանով իսկ ռայխսվերը բավարարվեց, և գերմանական բանակի ու պրուսական

ազնվականության համազգեստի պատիվը պահպանված  
է :

Այսպիսի տեսք ունեյին փետրվարի 5-ի դեպքերը  
Գերմանիայում՝ Փաշխտական մամուլի լուսարան-  
մամբ: Իրականում, գերմանական ռալյսայիների ղեկա-  
վարության մեջ և Փաշխտական Գերմանիայի այլ ղե-  
կավար որդաններում կատարված տեղափոխումները  
կրում էին ամենևին վոչ այնպիսի անմեղ բնույթ,  
ինչպես այդ ջանում եր ներկայացնել Փաշխտական  
մամուլը:

Իրականում հապա ի՞նչ տեղի ունեցավ Գերմա-  
նիայում:

Վերը հիշատակված տեղափոխումների մասին փե-  
տրվարի 5-ին Հիտլերի հրապարակած կարգադրու-  
թյուններն արտացոլում են ներքին տարաձայնու-  
թյունները Փաշխտական Գերմանիայի ղեկավարող  
չրջաններում: Պայքարը Փաշխտական վերնախալի-  
րում սկսվել է փետրվարի 5-ից շատ առաջ: Մասնա-  
փորպես, անտագոնիզմը ռալյսայիների կադրային սպա-  
յության և Փաշխտական ղեկավարության մեջ զարգա-  
ցել է Հիտլերի՝ իշխանության գլուխ կանգնելու մո-  
մենտից: Այդ պայքարը հատկապես սրվեց 1938 թ.  
հունվարի վեջ՝ ռեբրին: Բայց Փաշխտական «ազատ  
մամուլը» բոլոր ուժերով ջանում է թաղցնել յեղած  
հակասությունները, և հարկ է լինում բոլոր այդպիսի  
բաները լուի կռահել, իսկ հետագայում իմանալ տեղի  
ունեցած փաստերի մասին:

«Այսօրվա Գերմանիայում քաղաքական դրամանե-  
րը տեղի յեն ունենում կուլիաների հետևում: Յեղ մի-  
այն յերը խաղը վերջացած է, մենք իմանում ենք, թե



ի՛նչ է տեղի ունեցել և վորոնք են տեղի ունեցածի հետևանքները», — նշում է անգլիական կոնսերվատիվ «Իվնինգ ստանդարտ» լրագրի 1938 թ. փետրվարի 5-ի համարը:

Անգլիական լրագրի այս բնութագիրը վերաբերում է դեպքերի թե՛ պատճառների և թե՛ բնույթի լուսարանմանը, դեպքեր, վորոնք տեղի ունեյին Գերմանիայում 1938 թ. փետրվարին: Այս դեպքերը, վորոնք իրենց արտացոլումն են գտել Փաշխտական կառավարութայն կազմի մեջ տեղի ունեցած խոշոր տեղափոխումների մեջ, պարզաբանվում են, յեթե միայն ուշադրութայմբ նայենք իրերի իսկական դրութայնը Գերմանիայում, այլ վոչ թե այն պատճառով, վոր նրանց մասին գրում են Փաշխտական լրագրերը:

Այս դեպքերը հասկանալու բանալին տալիս է մեղ թեկուզ և գերմանական Փաշխտների կողմից իրենց գլիտատուրայի հնգամյակը տոնելու բնույթը:

Հունվարի 30-ին, Փաշխտներ՝ իշխանութայն դլուխ անցնելու ուրը, «յերրորդ կայսրութայն» մեջ նըվում է վորպես տոն: Այդ ուրը սովորաբար հավաքվում է «ռայխստագը», և Հիտլերը տրագիցիոն ճառ է արտասանում: Փաշխտական գլիտատուրայի հերթական տարեդարձը տոնվեց Գերմանիայում նշանակալիորեն ավելի պակաս հանդիսավոր կերպով, քան անցյալ տարիներում: Նույնիսկ ինքը «Ֆյուրերը» ձեռնպահ մնաց յելույթ ունենալուց: Արդեն ամեն ինչ պատրաստված էր «ռայխստագի» հունվարի 30-ի տրագիցիոն նիստի առթիվ, արդեն դրված էյին բարձրախոսներ շենքի և դրոշակների կայմի մոտ, — բայց անսպասելիորեն «ռայխստագի» նիստը ի չիք դարձավ:

Հենց այդպես եւ անսպասելիորեն ի չիք դարձաւ ծանր  
ինդուստրիայի ներկայացուցիչների բանկետը, վոր-  
տեղ Հիտլերը պետք ե ճառով հանդես դար ֆաշիստա-  
կան կառավարութեան տնտեսական քաղաքականու-  
թեան մասին:

Ֆաշիստական դիկտատուրայի հնգամյակի այնքան  
«անաղմուկ» հավերժացման այդ փաստը Գերմանիայի  
քաղաքական դրութիւնը դիտող մարդկանց ուշադրու-  
թիւնը լարեց. յետե Հիտլերը, վորը սիրում եր ամեն  
բանի առթիւ հանդես գալ ճոճաւ ճառերով, հանկարծ  
հրաժարվեց յելույթ ունենալուց հնգամյակի ուրը,  
ասպա, ըստ յերեւութին, այստեղ թագնւած ե մի ինչ-  
վոր լուրջ պատճառ: Յեւ այդ պատճառը չատ չուտով  
յերեւան յեկավ: Ըստ սովորութեան, հունվարին, տա-  
րեդարձի նախորդակին, Հիտլերը իր մօտ Բերլինէսգա-  
դենի վիլլայում սարքում եր մի շարք պաշտօնական  
ընդունելութիւններ ե խորհրդակցութիւններ: Այդ  
խորհրդակցութիւններում Հիտլերը, ինչպես գրում ե  
Ֆրանսական «Թան» լրագիրը, շոշափում ե դանաղան  
խմբերի կարծիքը, իրազեկ ե դառնում նրանց տրամա-  
դրութիւններին ե դրան համապատասխան վորոշում  
ե իր վարքագիծը: Ընթացիկ տարում այս ընդունելու-  
թիւններն ու խորհրդակցութիւններն անցնում եյին  
առանձնապես բուռն կերպով: Ռայխսպերի բաղմաթիւ  
գիմումները ե միուս շրջանների արտահայտած հավակ-  
նութիւնները վիլայում եյին, վոր կառավարող առան-  
ձին խմբակներում առկա յեն լուրջ տարաձայնու-  
թիւններ ներքին ու արտաքին քաղաքականութեան  
հիմնական հարցերի շուրջը:

Ամենից առաջ Հիտլերը այդ ընդունելութիւնների



10632

Ժամանակ լսեց դժգոհություն Իսպանիայի ինտերվեն-  
ցիայի հետևանքներից, դժգոհություն Իտալիայից,  
Գերմանիայի դաշնակցից այդ արյունոտ ավանտյու-  
րայում: Ձգձգվող պատերազմը, հանրապետական զոր-  
քերի կողմից ինտերվենտներին ցույց տրված հերոսա-  
կան դիմադրությունը խիստ դժգոհություն առաջա-  
ցրին Փաշիստական քաղաքականությունից Գերմանիա-  
յի լայն շրջաններում: Այս տրամադրությունները հա-  
մակրանք դտան նաև բանակում: Ռայխսվերի շրջան-  
ները բացահայտ դժգոհություն եյին արտահայտում  
անժամանակ սկսված և վոչ-բավականաչափ նախա-  
պատրաստված ինտերվենցիայից: Բացահայտ անհա-  
վանությունն արտահայտվում եր նաև Գերմանիայի  
ու Ճապոնիայի դաշինքի առթիվ: Ճապոնիայի կիրա-  
ռած ավանտյուրիստական քաղաքականությունը, նրա  
ձեռնարկած պատերազմը Չինաստանում դժվարացրին  
նրա դաշնակիցների համար հարաբերությունները  
Յեվրոպայի հիմնական կապիտալիստական պետու-  
թյունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի հետ:

Այսպիսով, ռայխսվերի ներկայացուցիչները փաս-  
տորեն արտահայտվում եյին ընդդեմ «Հռոմ-Բեռլին-  
Տոկիո առանցքի», վորը դարձել եր Գերմանիայի ար-  
տաքին քաղաքականության հիմքը: Ֆրանսական «Թան»  
լրագիրը հաղորդում ե.

«Ռայխսվերի ղեկավարները «Փյուրերի» հետ  
ունեցած ինտերվյուի ժամանակ քննադատության յեղ-  
թարկեցին պետության կողմնորոշումն արտաքին քա-  
ղաքականության հարցերում: Նրանք ղեմ եյին արտա-  
հայտվում Իտալիայի հետ չափազանց սերտ համագոր-  
ծակցությանը, Իսպանիայում յեղած ինտերվենցիայի





դեմ և Ճապոնիայի հետ համադործակցելու դեմ՝ Նրանք ազդարարեցին, Վոր անհրաժեշտ է մերձենալ Լոնդոնի հետ, թուլացնել Փարիզի հետ ունեցած հարաբերությունների լարումը»:

Մեծ հավակնություններ առաջադրեցին, այս խիղ լրագրի խոսքերով, նաև արդյունաբերական շրջանների և հողատերերի ներկայացուցիչները: Արդյունաբերողները դժգոհություն արտահայտեցին Փաշիստական կառավարության կիրառած՝ ավտարկիայի քաղաքականությունից: Կալվածատիրության կողմնակիցների ներկայացուցիչները հայտարարեցին, թե «քառամյա պլանը» քայքայում է դերմանական գյուղատնտեսությունը:

Փաշիստական դիկտատուրայի՝ հնգամյակի տոնակատարությանը նախորդող այս խորհրդակցություններում հայտնաբերվեցին լուրջ տարաձայնություններ ներքին և արտաքին քաղաքականության հիմնական հարցերի շուրջը:

Անգլիական լեյբորիստական՝ «Դեյլի շերալդ» լրագիրը 1938 թ. փետրվարի 7-ին այսպես է բնորոշում Գերմանիայի դեկավար շրջաններում տեղի ունեցած այն պայքարը, Վորը 1938 թ. հունվար-փետրվարյան դեպքերի խիստական պատճառը հանդիսացավ:

«Ահա այն, ճգնաժամի ներքին պատմությունը, ճգնաժամ, Վորը սպառնում եր Գերմանիան անջատել... Ճգնաժամը պայմանավորված եր մեծ պայքարի յերեք տեսակով. 1) պայքար բանակի ու Փաշիստական կուսակցության միջև: 2) Գյոթինգի «քառամյա պլանի» կազմակերպության ու խոչոր արդյունա-

բերողների միջև և 3) հենց իրենց՝ ղեկավարող Փաշխատների միջև» :

Այսպիսով, Գերմանիայում Փաշխատական ռեժիմի հնգամյակի տոնակատարությանը նախորդող խորհրդակցություններն ու ընդունելությունները խորը հակասություններ բացահայտեցին ղեկավար բանակում և ցույց տվին այդ ռեժիմի ամբողջ սնանկությունը : Այս հանգամանքները նշանակալիորեն կրճատեցին Հիտլերի պերճախոսության հեղեղը : Նա ստիպված երտարեգարձի որը հրաժարվել Փաշխատական տիրապետության կայունության ու անսասանության մասին իր տրադիցիոն հանդիսավոր ճառերից :

«Նոյե ցյուրիխեր ցայտունդի» փետրվարի 6-ի համարը հաղորդում և .

«Այն լուրը, թե Հիտլերը մտադրվել եր ռայխստադում ագրեսիվ քաղաքական ճառ արտասանել և վոր շատ գեներալների կողմից աջակցութուն գտած գեներալ Ֆրիչը արգելել և այդ ճառը, ե՛լ ավելի հավանական և դառնում» :

Վո<sup>ո</sup>րն և Գերմանիայի կառավարող շրջաններից մի մասում յեղած դժգոհության պատճառը : Ինչո՞վ բացատրել, վոր գերմանական բուրժուազիայի ամենառեակցիոն ու իմպերիալիստական մասի ծրագիր, իրագործող Փաշխատական դիկտատուրան դժգոհություն առաջացրեց վո՛չ միայն ժողովրդական լայն մասսաների մեջ, այլև նույնիսկ հենց բուրժուազիայի ղեկավար շրջաններում և բանակի ղեկավարության մեջ :

Այդ դժգոհության պատճառն արմատավորված և անցած հինգ տարվա ընթացքում Փաշխատների տիրա-



պետութեան հանրագումարում: Յերբ Հիտլերը փետրվարի 20-ին մեծ ուշացումով այնուամենայնիվ արտասանեց Ֆաշիստական դիկտատուրայի հնգամյա-  
հին նվիրված իր ճառը, նա ստիպված եր, յերկրում  
թագավորող իրը թե լիակատար բարեկեցութեան մա-  
սին արած սնապարծ հայտարարութիւններէ կողքին,  
ընդունել այդ ճառում, վոր «Գերմանիայի տնտեսա-  
կան դրութիւնը ծանր ե»:

Գերմանիան մի հսկայական ռազմական ճամբարի վերածելը, ամբողջ եկոնոմիկան պատերազմը նախապատրաստելու խնդիրներին յենթարկելը ծանր են անդրադառնում տնտեսութեան կարևորագույն ճյուղերի կացութեան վրա, սուր կերպով վատացնում են ժողովրդական լայն մասսաների դրութիւնը:

Հանրահայտնի յե, վոր Ֆաշիստներէ իշխանութեան գլուխ անցնելուց հետո ուժեղացավ բանվոր դասակարգի շահագործումը: Ֆաշիստական ռեժիմի տիրապետութեան 5 տարւա ընթացքում բանվորներէ աշխատավարձը Գերմանիայում իջավ 30%-ով, իսկ այդ ժամանակամիջոցում աշխատանքային ուղի տեւողութիւնն ավելացավ 16%-ով: Դրա փոխարեն կապիտալիստներէ յեկամուտներն այդ 5 տարւա ընթացքում՝ 1932-ից մինչև 1936 թ. աճեցին 70%-ով:

Հակաֆաշիստական «Դոյչե ինֆորմացիոնեն» լրուէտենի տվյալներէ համաձայն, վորոնք կազմվել են գերմանական պաշտոնական վիճակագրութեան հիման վրա, 1933 թ. ապրիլից մինչև 1937 թ. սեպտեմբերը առաջին անհրաժեշտութեան առարկաների գները աճել են 24,2%-ով:

«Թնդանութենէ յուղի փոխարեն» լողունգն իրական-



նացնելու կարգով, սուր կերպով փոխվեց դերմանա-  
կան ներմուծման և արտահանման կառուցվածքը:  
Ներմուծման հիմնական առարկան հանդիսանում է  
հումքը ռազմական արդյունաբերություն համար-  
սպառման առարկաների ներմուծումը, փորոնց Գեր-  
մանիան մեծ կարիք է զգում, սուր կերպով կրճատ-  
վեց: 1932 թվի հետ համեմատած՝ ճարպերի ներմու-  
ծումը կրճատվեց 207 հազ. տոննից մինչև 120 հազ.  
տ., դարու ներմուծումն ընկավ 568 հազ. տոննից  
մինչև 46 հազ. տ., կերերի ներմուծումը՝ 200 հազ.  
տոննից մինչև 7 հազ. տ. և այլն: Դրա փոխարեն  
արդյունաբերական հումքի ներմուծումը հսկայական  
չափերի հասավ. 1932 թ. ներմուծված էր 3,8 միլիոն  
տ. հանքանյութ և մետաղ, իսկ 1936 թ. 20 միլիոն  
տ. ավելի:

Նշանակալիորեն ուժեղացավ հարկային ճնշումը:

Հարկային մուտքերը 1932/33 թ. կազմում էին  
10,2 միլիարդ մարկ: 1936/37 տնտեսական տարում  
նրանք աճեցին մինչև 15,9 միլիարդի, իսկ ընթացիկ  
ֆինանսական տարում կազմում են մոտավորապես  
18 միլիարդ մարկ: Առանձնապես ուժգնորեն աճեցին  
մասսայական հարկերը: Աշխատավարձի հարկերն ա-  
վելացան 221,5%-ով, լայն սպառման ապրանքների  
հարկերը՝ 159,4%-ով և այլն: Հարկային ճնշման ու-  
ժեղացումը խփում է ամենից առաջ աշխատավորնե-  
րին, նրանց կենսական մակարդակին: Այս հիման վրա  
ե՛լ ավելի յե աճում դժգոհությունը բնակչու-  
թյան մասսաների մեջ:

Փաշխտական Գերմանիայում դաժան ճնշման և  
յենթարկվում դյուղացիությունը:

Փաշխտական դիկտատուրան բարեխափեց կալվածատիրական տնտեսությունների վիճակը, բարձրացնելով հացահատիկների գներն ի հաշիվ գյուղացիական անասնապահական տնտեսության:

Փաշխտական դիկտատուրայի բոլոր միջոցառումները գյուղատնտեսության բնագավառում—անասնակերի և սննդամթերքների ներմուծման կրճատումը, անասունի, կաթի, ձվի, բանջարեղենի ազատ վաճառումն արգելելը, մթերքների (այդ թվում և անասնապահական) հարկադիր հանձնումը պետությանը ցածր գներով և այլն, ուժեղ կերպով զարկում են մանր գյուղացիական տնտեսությանը: Աշխատավոր գյուղացիությունը կողոպտման և յենթարկվում նաև չափից դուրս հարկերի ու հանուրդների միջոցով:

Այս հոգի վրա ե՛լ ավելի յե աճում դժգոհությունը Փաշխտական ուժիմից գյուղացիության մեջ, դժգոհություն, վորը յերբեմն յերևան ե գալիս մասսայական յելույթներում ընդդեմ Փաշխտական քաղաքականության: Տեղի եյին ունենում գյուղացիների յելույթներ ընդդեմ Փաշխտական իշխանության ներկայացուցիչների՝ գյուղերում: Գյուղացիների տրամադրությունն առանձնապես հանդես յեկավ Գերմանիայում աշնանային մանյովրների ժամանակ: Գյուղացիները պատռում եյին պլակատները, փչացնում եյին այն ամենը, ինչ կարող եյին, բանակի տեղաշարժումը դժվարացնելու համար: Այսպես եյին արտահայտում նրանք իրենց վերաբերմունքը Փաշխտական բանակի հանդեպ:

Նախքան իշխանության գլուխ անցնելը Փաշխտներն իրենց ղեմագլուխական խոստումներով իրենց



կողմն էյին գրավում մանր բուրժուազիայի նշանակելի մասը: Այժմ մանր բուրժուազիան ավելի ու ավելի յե համոզւում, վոր ինքը չարաչար սխալված է յեղել: Ֆաշիստական Գերմանիայում դաժան չահագործման են յենթարկւում մանր արհեստավորների մասսաները: 1937 թ. սկզբում Գյորլինգը հայտարարեց, վոր Գերմանիայում յեղած մանր արհեստավորական ձեռնարկություններից 700 հազ. «անկայուն», ավելորդ են: Հարկավոր է, վոր այդ ձեռնարկություններում աշխատողներն իրենց աշխատանք գտնեն այլ տեղերում: Իսկ վորպեսզի ստիպեն նրանց այդ անելու, նրանց այլևս հումք չեն տալիս, իսկ հարկերը և ապրօրինի տուրքերը քանի դնում բարձրանում են: Այսպիսով մանր արհեստավորների մասսաները քայքայման են հասցւում:

Իանվորների, գյուղացիների, արհեստավորների և մանր բուրժուազիայի մյուս խավերի կենսական մակարդակի իջեցումը նշանակելիորեն կրճատեց Գերմանիայի ներքին շուկան: Ներքին շուկան նեղացնելը դժվարացնում է լայն սպառման առարկաների վաճառահանումը, մեծ դժվարություններ է ստեղծում արտադրության շատ ճյուղերի համար:

Չնայած բնակչության աճմանը (տարեկան միջին աճը՝ 300 հազ. մարդ), 1935 թ. Սաարի մարզը Գերմանիայի կազմի մեջ մտցնելուն, արտադրած սպառման առարկաների մասսան զգալի կրճատւեց: Յեթե 1929 թ. արտադրված սպառման առարկաների ընդհանուր մասսան ընդունենք 100, ապա այդ առարկաների արտադրությունը 1934 թ. կկազմի 92,4%, 1935 թ. — 88,2%, 1936 թ. (առաջին կիսամյակում)



94,8%, իսկ 1937 թ. (1928 թ. արտադրության համեմատությամբ) II կվարտալում՝ 96,5%: Հարկ ե նաև հաշվի առնել, վոր սպառման այդ առարկաների թվի մեջ մտնում են հագուստեղենը, կոշիկեղենը և այլ ապրանքներ, վորոնցով մատակարարվում ե բանակը:

Լայն սպառման առարկաների արտադրանքի իջեցման մասին խոսում են նաև ուրիշ փաստեր: Գերմանական «Կրեդիտգելեշաֆտ» բանկի տեսության տվյալների համաձայն, Գերմանիայի տեքստիլ արդյունաբերությունը 1937 թ. բեռնավորված եր իր արտադրական կարողության միայն 60%-ով, կարի արդյունաբերությունը՝ 56%-ով: Սպառման առարկաներ արտադրող մի շարք այլ ճյուղեր բեռնավորված են ավելի պակաս, քան մինչկրիզիսյան 1928 թվին:

Այս հանգամանքները դժգոհություն են առաջացնում վոչ միայն աշխատավորների մեջ, այլև բուրժուազիայի վորոշ խավերի մեջ:

Արդյունաբերությունը Գերմանիայում վերջին տարիների ընթացքում զարգանում եր գլխավորապես արտադրության միջոցների արտադրության հաշվին: Նույնիսկ ավելի ճիշտ կլինի ասել, վոր արտադրությունը զարգանում եր վոչ թե ի հաշիվ արտադրության միջոցների մշակման ընդհանրապես, այլ ի հաշիվ ավերածության միջոցների, ի հաշիվ պատրաստվող և մասամբ տարվող արդեն պատերազմի սպասարկման: Նույնիսկ բուրժուական լրագրերը նշում են այն փաստը, վոր գերմանական արդյունաբերությունը սպասարկում ե գլխավորապես պատերազմի նպատակներին:


«Արդյունաբերական աշխուժացումը Գերմանիա-

յում կապված ե համարյա բացարձակապես սպառա-  
զինումների հետ... Այն ժամանակ, յերբ Գերմանիան  
հանդերձում եր վերին աստիճանի մեքենայացված  
մի մեծ բանակ, կառուցեց ողային խոշոր նավատոր-  
միդ, ստեղծում ե նոր ծովային նավատորմիդ և հա-  
մարյա վերջացրել ե իր նոր ճանապարհները, կա-  
մուրջները,—17 միլ. նրա աշխատավոր բնակչությու-  
նը, մասնավոր անձերը այլևս հազուստ չեն ձեռք բե-  
րում և մեծ քանակությամբ սնունդ չեն դործա-  
ծում»,—գրում եր անգլիական լիբերալ «Մանչեստեր  
Գարդիան» լրագիրը 1936 թվին:

Տնտեսության ռազմականացումը ծնեց հումքի  
սուր պակասորդ: Հումքը, վորը գտնվում ե արտա-  
սահմանում, նախորոշվում ե առաջին հերթին ռազ-  
մական արդյունաբերության պահանջները բավարա-  
րելու համար: Այդ պատճառով առանձնապես սուր  
կերպով ե շոշափելի դառնում հումքի պակասը սպառ-  
ման առարկաների արտադրության բնագավառում:

Արտադրության այն ճյուղերի արդյունաբերող-  
ների մեջ, վորտեղ ամենից ավելի յե զգացվում  
հումքի պակասը, խիստ դժգոհություն կա: Ե՛լ ավելի  
յե զգացվում նաև այս խավերում դժգոհություն ավ-  
տարկիայի՝ Գերմանիան համաշխարհային շուկայից  
անջատելու քաղաքականությունից:

Ճաշխոտական դիկտատուրայի հնգամյակի բա-  
լանսը ցույց ե տալիս սպառազինումների խիստ աճում,  
լայն աշխատավորական մասսաների կյանքի մակար-  
դակի նույնքան իսկ խիստ իջեցում: Յեթե առաջ  
Ֆաշիստական կառավարիչներն առաջադրում եյին  
«Թնդանոթնե՛ր յուղի փոխարեն» լոգունգը, ապա վեր-





ջին ժամանակս նրանք ավելի հաճախ են խոսում հացի սպառումը կրճատելու անհրաժեշտության մասին: 1937 թվին, «բերքի տոնի» ժամանակ արտասանած իր ճառում Հիտլերը աներկմտորեն չեչտեց այդ խնդիրը— կրճատել հացի սպառումը: Ավտարկիայի քաղաքականության և տնտեսությունը կատարելապես պատերազմի նպատակներին յենթարկելու հետևանքով Փաշիստական կառավարությունը հարկադրված յեղավ կարևորագույն սննդամթերքների սպառման խիստ կարգավորմանն անցնելու: Այս ամենը գերմանական ժողովրդի լայն մասսաներում առաջացնում է աճող դիմադրություն Փաշիստական ռեժիմին: Շարունակ ուժեղանում է մասսայական դժգոհությունը Փաշիստական ղեկատուության տիրապետությունից: Այս դժգոհությունն ընդգրկեց վո'չ միայն աշխատավորներին, մանր բուրժուազիային, այլև խոշոր բուրժուազիայի առանձին խավերին և գերմանական բանակի ղեկավարությանը:

Տիրապետող բուրժուազիայի միջանի, ավելի զգաստ ներկայացուցիչներ տագնապ են կրում Փաշիստական տիրապետության հանրագումարների առթիվ, դժգոհություն են արտահայտում Հիտլեր—Գյոբլինգի քաղաքականությունից: Այս հողի վրա զարգանում է պայքարը հենց ղեկավարող կլիկայի մեջ:

Փաշիստական Գերմանիայի ղեկավարող շրջանների այս պայքարում թագնված է 1938 թ. հունվար—փետրվարին տեղի ունեցած դեպքերի պատճառը:

\* \* \*

Ինչպե՞ս էլին տեղի ունենում այդ դեպքերը:

Ռայխսսվերի շրջաններում յեղած դժգոհությունը



արտահայտվում էր վոչ միայն առանձին հայտարարությունների ձևով, այլև ընդունում էր նշանակելիություն ավելի ակտիվ ձևեր: Ահա՛ թե ինչ է հաղորդում այդ մասին «Թան» լրագիրը:

«Գեներալ Ֆոն Ֆրիչը իրեն մոտ հրավիրեց ուրիշ գեներալների նրա համար, վորպեսզի նրանց հետ մեկտեղ նշի գեստապոյի հարձակմանը զիմադրելու պլանը: Հունվարի 28-ի առավոտը ռայխսվերի վաշտը գրավեց Վիլհելմշտրասեյի վրա գտնվող № 64 պալատի շենքը, Հիտլերի գրասենյակի մոտակայքում: Դրանով գեներալ Ֆրիչը ուզում էր Հիմմլերին\* ցույց տալ, թե ինքը պատրաստ է զիմադրություն ցույց տալ, ուժին պատրաստ է ուժով պատասխանելու: Միաժամանակ միջոցներ ձեռք առնվեցին նրա համար, վորպեսզի միջանի ստրատեգիական կետեր մայրաքաղաքում գեստապոն չգրավեր: Հունվարի 28-ի և 29-ի որերը Բեռլինում ընթացան տեռորի պայմաններում: Նշանավոր մարզկանց նշանակելի մասը, վորը քիչ թե չառ մասնակցել էր գեներալների դավադրությանը, շտապով թողեց մայրաքաղաքը: Հունվարի 29-ի յերեկոյան հայտնի դարձավ, վոր Հիտլերը ստորագրել է Բլոմբերգին հրաժարեցում տալը, վորը պահանջում էր ռայխսվերը, և միաժամանակ ստորագրել է գեներալ Ֆրիչի հրաժարեցման հրամանը: Ֆրիչը հունվարի 30-ին, յերբ նրան հայտնեցին իրեն հրաժարեցում տալու մասին, ուղեց հասկացնել, վոր ինքը չի ել մտածում յենթարկվել այդ հրամանին: Հունվարի 31-ին իրադրության լարվածությունն ուժեղացավ:

---

\* Հիմմլեր—գեստապոյի պետը:

Հենց այդ մոմենտին բեմի վրա յերևան ե գալիս վորպէս միջնորդ ռայխսպետի ու Հիտլերի միջև գեներալ Կեյտելը: Կեյտելը գերմանական ռազմական շրջաններում աչքի ընկալ այն մոմենտից, յերբ Յրիչի փոխարեն նրան հանձնարարվեց մանյովրները հրամանատարութիւնը: Հունվարի 31-ին գեներալ Կեյտելը սկսեց բանակցութիւններ վարել Հիտլերի հետ: Այդ բանակցութիւնների լեյակետը գեներալ Յրիչի և դաւադրութեան մասնակից այլ անձերի հեռացնելու համաձայնութիւնն էր: Փետրվարի 1-ին Հիմմլերն անձամբ ներկայացավ Յրիչին և հայտարարեց նրան Հիտլերի հրամանը նրան ձերբակալելու մասին»:

Այսպէս ե նկարագրում դեպքերը Փրանսական «Թան» լրագիրը:

Իսկ փետրվարի 5-ին Փաշխտական մամուլը հրապարակեց հաղորդագրութիւն այն մասին, թե Հիտլերը Յրիչի և Բլոմբերգի հրաժարեցման համաձայնութիւնը տվեց նրանց առողջութեան վատ վիճակի կապակցութեամբ: Այդ նույն օրը մամուլում հանդես եկավ Հիտլերի՝ վերը մեջբերված կեղծավոր դիմումը Յրիչին: Այդ դիմումը հրապարակվեց միջանի օր անց այն բանից հետո, յերբ Յրիչը Հիտլերի կարգադրութեամբ ձերբակալված էր:

Յերկրում լարված վիճակ ստեղծվեց: Յրիչի ձերբակալութիւնը ուժեղ հուզմունք առաջացրեց ռայխսպետերի շարքերում: Դեռ մինչև փետրվարի 4-ը Բավարիայում, չեխոսլովակիան «Հալլո Նովինի» լրագրի հաղորդագրութեան համաձայն, ձերբակալվեց մոտ 300 սպա: Բազմաթիւ սպաներ փախան արտասահման՝ վախենալով ռեպրեսիաներից: Բեռլինում և Պրուսիա-



յի, Բաւլարիայի շատ քաղաքներում ու այլ մարդերում մասսայական խուզարկութիւններ և ձերբակալութիւններ կատարւեցին սպաների մեջ:

Այդ նույն «Հալլո Նովինի» լրագիրը հաղորդում է, Վոր Հունվարի 31-ին և փետրվարի 1-ին Արևելյան Պրուսիայում «Պողտատե սաղավարտ» (նացիոնալիստների կուսակցութեան մարտական կազմակերպութիւն, վորը գոյութիւն ուներ մինչև Փաշիստների իշխանութեան գլուխ անցնելը) կազմակերպութեան նախկին բոլոր անդամները զինաթափւեցին և խիստ հսկողութեան տակ ստնվեցին: Շտալհեյմականների խմբերից մեկը սկսեց բարիկադներով փակվել զորանոցներում և կատեգորիկ կերպով հրաժարվեց գննքը հանձնել: Բանը հասավ փոխհրաձգութիւնների, վորի հետեանքով 3 մարդ սպանվեց և 11 մարդ վիրավորվեց: 16 բեռնատար ավտոմոբիլներով դեպքի վայրն ուղարկվեցին լավ զինված Փաշիստական սահնորդների ջոկատներ («SS»):

«Յենտրալ նյուս» գործակալութիւնը Վարչաւայից հաղորդում է, թե Գլայգելիցում և Արևելյան Գերմանիայի ուրիշ քաղաքներում հակաֆաշիստական իւրտումներ բռնկեցին. Արևելյան Պրուսիայում և Սիլեզիայում լայնորեն տարածվում են հակաֆաշիստական թերթիկներ «Կորչի' հիտլերյան ռեժիմը» լողունգով:

Այդ նույն հաղորդագրութիւնների համաձայն Ալբենշտայնի կայազորում, Արևելյան Պրուսիայում, սպայական կորպուսը թույլ չտվեց ստուգման յենթարկելու հրամանատարական կազմի քաղաքական բարեհոսութիւնը: Կայազորի ավագ սպաները հրաժարվե-

ցին սատուելիչ հանձնաժողովին ընդունելուց և նրա հարցերին պատասխանելուց: Արևելյան Պրուսիայի գետտապոյի տեղական որդանները Բեռլինից վոստիկանական ողնություն խնդրեցին: Կատարվեցին մասսայական ձերբակալություններ:

Ինչպես հաղորդում է «Դեյլի Տելեգրաֆ» ենդ Մորնինգ Պոստ» լրագրի Բեռլինի թղթակիցը՝ Փաշխտական չըջաններում շատ եյին վախենում դժգոհության հետագա տարածումից բանակում: Այս կապակցությամբ ստեղծվեցին խառը հանձնաժողովներ ռայխսվերը և պետական ասլարատը զտելու համար: Յերկիրը փաստորեն փետրվարի այդ որերին ռազմական դրության մեջ եր գտնվում: Բանակում դադարեցվեցին բոլոր արձակուրդները: Անդլիական և Ֆրանսական լրագրերը Գերմանիա մտցնել թույլ չէյին տալիս: Դրանք պահվում եյին սահմանում:

Այսպես և իրական պատկերն այն դեպքերի, վորոնք թագնված եյին Փաշխտական մամուլի անմեղ հաղորդադրությունների հետևում՝ գերմանական կառավարության կազմում կատարված տեղափոխումների մասին, միջանի զառամյալ գեներալներին հրաժարական տալու մասին և Փաշխտական ռեժիմի իբր թե տեղի ունեցած ամբապնդման մասին:

\* \* \*

Իսկ ինչպիսի՞ արմատական տեղափոխումներ տեղի ունեցան գերմանական կառավարության կազմում, և ի՞նչ է թագնված նրանցից յուրաքանչյուրի հետևվում:

Ինչպես մենք արդեն նշեցինք, այդ տեղափոխումներն ամենից առաջ վերաբերեցին ռազմական գերա-



տեսչությանը: Պաշտոնաթող յեղավ ռազմական մի-  
նիստը Բլոմբերգը: «Զինված ուժերի գերազույն հրա-  
մանատարության» ղեկավար (մի պաշտոն, վորը հա-  
մապատասխանում է ռազմական մինիստրին) նշանակ-  
ված է գեներալ Կեյտելը: Բանակի գլխավոր հրամա-  
նատար՝ պաշտոնաթող յեղած գեներալ Ֆրիչի տեղը  
գրավեց հրետանու-գեներալ Փոն Բրաուխիչը, վորը  
միաժամանակ ստացավ գեներալ-գեդապետի աստի-  
ճան: Նշանակված է ռազմա-ծովային ուժերի նոր  
պետ՝ Ռյուդելը: Բրաուխիչի փոխարեն IV՝ զինվորա-  
կան խմբի գերազույն պետ նշանակվել է Փաշխտական  
գեներալ Ռայխենաուն: II զինվորական խմբի զինվո-  
րական պետ է նշանակված հրետանու-գեներալ  
Լիստը:

Պաշտոնաթող յեղած գեներալ Բլոմբերգը ռազմա-  
կան մինիստրությունը գլխավորում էր Փաշխտական  
գլխատնտեսայի առաջին օրերից: Հինգ տարի շարու-  
նակ Բլոմբերգը ռայխսվերի գեներալիտետի և Փաշխ-  
տական կուսակցության միջև միջնորդի միսիան էր  
կատարում: Այն հանգամանքը, վոր Հիտլերն իշխա-  
նության գլուխ անցնելուց անմիջապես հետո Գերմա-  
նիայի մաքսիմալ սպառազինման ուղղությունը բռնեց,  
թեթևացրեց Բլոմբերգի վորպես միջնորդի դերը: Վեր-  
ջին գեր չխաղաց Բլոմբերգը, գրոհային ջոկատներում  
1934 թ. ամառը տեղի ունեցած դժգոհությունը ճշն-  
շելու թեջ: Վոչ այլ վոք, քան Բլոմբերգը, այն ժամա-  
նակ «Ֆյոլկիշեր Բեոբախտեր»-ում գետեղված իր հոգ-  
վածում կոչ էր անում գրոհային ջոկատների ղեկավա-  
րության դատաստանը տեսնել:

Ռեմի և գրոհային ջոկատների մյուս ներկայացու-

ցիւնները արյունոտ դատաստանը բաւարարեց ռայխս-  
վերին, և թվում էր, թե կոնտակտը ռայխսվերի և  
Փաշխտական կուսակցության միջև հաստատված է:  
Սակայն վերջին որերի դեպքերը Գերմանիայում վկա-  
յում են այն մասին, Վոր այդ կոնտակտը, Վոր ա-  
ռաջներում ել հաստատուն չէր, այժմ հիմնականո-  
րեն խախտված է: Ստեղծված պայմաններում Բլոմ-  
բերգը չկարողացավ այնուհետև կատարել միջնորդի և  
հաշտարարի միսիան զինվորական շրջանների և Փա-  
շխտական կուսակցության միջև: Նրա դերը սպառ-  
ված էր, և Բլոմբերգին հրաժարական տվին: Վո՛չ թե  
Բլոմբերգի զադամյալ հասակը կամ թույլ առողջու-  
թյունը, Վո՛չ թե նրա ամուսնությունը վոչ-բավակա-  
նաչափ բարձր ծագում ունեցող կնոջ հետ առաջացրին  
այդ հրաժարեցումը,—այդ հրաժարեցումը առաջաց-  
րին Փաշխտական բանակում սրվող հակասություն-  
ները, մասնավորապես հակասությունները զինվորա-  
կան շրջանների ու Փաշխտական կուսակցության  
միջև:

Ո՞վ է գեներալ Բլոմբերգին փոխարինող հրետա-  
նու-գեներալ Կեյտելը: Գեներալ Կեյտելը իր առաջին  
սպայական աստիճանը ստացել է 1901 թվին. իմպե-  
րիալիստական պատերազմի սկզբին նա Փրոնտում  
մարտկոցի հրամանատար էր: Կեյտելի առաջարժումը  
պաշտոնեյական աստիճանով սկսվեց Փաշխտական ու-  
ժիմ հաստատվելուց հետո միայն: 1934 թ. ապրիլին  
Կեյտելը բարձրացվեց գեներալ-մայորի աստիճանի և  
նշանակվեց զինվորական ուղրուդի հրամանատար. այդ  
ժամանակ Հիտլերն այցելեց նրան և միքանի որ անց-  
կացրեց նրա ղեկավարած զինվորական մասերում:



Բանակը վերակազմելուց հետո Կեյտելը ստացավ հետագա առաջարժումը և նշանակվեց ռազմական միջխտրուլթյան ռազմա-քաղաքական վարչության պետ:

Այդ գեներալը, վորը մինչ Փաշիստական դիկտատուրան քիչ եր հայտնի, այժմ նշանակված ե «գլխաված ուժերի գերադույն հրամանատարության» ղեկավար: Հիտլերի հետ ունեցած կապերը, ինչպես յերևում ե, հանդիսանում են այն հիմնական արժանիքը, վորն ուժանդակեց նրա առաջխաղացմանն ընդհուպ մինչև ռազմական միջխտրի պոստը:

Ծավալված գեպքերում ե՛լ ավելի ախտիվ դեր խաղաց, ինչպես մենք տեսանք, նախկին գլխավոր հրամանատար գեներալ Ֆրիչը: Ռայխսպլերի հրամանատարության շարքերում Ֆրիչն ամենից ավելի աչքի ընկնող ֆիգուրն եր: Նա համարվում ե 1934 թ. դեկտեմբերին վախճանված գեներալ Սեկտի՝ ժամանակակից գերմանական բանակի կազմակերպչի՝ ամենից ավելի ընդունակ աշակերտներից մեկը:

Ֆրիչի և Հիտլերի միջև արդեն վաղուց նշմարվել են լուրջ տարաձայնություններ գերմանական բանակը վերակազմելու մասին յեղած հարցում: Ֆրիչը հանդես յեկավ բանակի զարգացման չափից դուրս արագացման դեմ: Նա բազմիցս հանդես եր գալիս գլխավորական միավորումները ծավալելու ավելորդ աճապարանքի դեմ, վոր անբարենպաստորեն ե անդրադառնում ձեւավորված մասերի վորակական կազմի վրա:

1935—1936 թ.թ. Հիտլերի ու Ֆրիչի միջև հաճախ տեղի եյին ունենում ընդհարումներ՝ Հիտլերի կարծիքով նոր բանակը վոչ-բավականաչափ արագ ձևավորելու հողի վրա: Հիտլերը պահանջում եր, վոր

1937 թ. հունվարի 1-ին ձևավորված լինեն 50 դելի-  
գիա, այսինքն, ուղղում էր, վոր բանակը քանակով  
հասցվի պատերազմական ժամանակի մակարդակին:  
Մինչդեռ հսկայական լարվածությամբ հաջողվեց ձե-  
վավորել 1936 թ. ընթացքում միայն 36 դելիգիա:  
Ֆրիչն աներկմտորեն դժգոհություն արտահայտեց  
Փաշիստական կառավարության արտաքին քաղաքա-  
կանությունից, վորը մղում է դեպի բանակի զարգաց-  
ման չափից դուրս արագացման ուղին, առանց առկա  
հնարավորությունները պատշաճորեն հաշվի առնելու:

Գերմանական գեներալիտետը չկարողացավ նույն-  
պես միանգամայն անմասնակից մնալ՝ զորանոցնե-  
րում, զինվորների մասսաներում յեղած այն տրամա-  
դրություններին, վորոնք բանակի ամբողջյանը լուրջ  
սպառնալիք են ներկայացնում: Ֆրիչը զգաստորեն  
գնահատեց Հիտլերի ավանտյուրիստական քաղաքակա-  
նությունն արտաքին քաղաքականության հարցերում,  
սպառազինումների ավանտյուրիստական մեթոդները:  
Ուստի Ֆրիչը հեռացվեց բանակի ղեկավարությունից  
և ձերբակալվեց:

Գեներալ Ֆրիչին գլխավոր հրամանատարի պոս-  
տում փոխարինեց գեներալ Փոն Բրաուխիչը: Փոն Բրա-  
ուխիչը գեներալական ընտանիքից է ծագում: Իր առա-  
ջին սպայական աստիճանը նա ստացել է 1900 թվին:  
Համաչխարհային պատերազմի ժամանակ Փոն Բրաու-  
խիչը գտնվում էր արևմտյան Փրոնտում: Մինչև վեր-  
ջին նշանակումը Փոն Բրաուխիչը գեներալ-լեյտենանտի  
աստիճանով IV զորական խմբի հրամանատարն էր:

Փոն Բրաուխիչի փոխարեն IV զորական խմբի  
հրամանատարի պոստում նշանակված է գեներալ Ռայ-



խենառւն։ Այս նշանակումը աստիճանի հասարակ բարձրացում չէ․ այդ բարձրացումը վկայում է այդ գէնեռալի ներկայացրած վորոշ ստրատեգիական կողմնորոշման հաղթանակը։ Գենեռալ Ռայխենառւն հայտնի յե վորպես կայծակի արագությամբ հարվածի թեորիայի հետևորդ։ Ռայխենառւն այդ թեորիան զարգացնում էր գլխավորապես Չեխոսլովակիայի վերաբերմամբ։ Այդ պատճառով հասկանալի յե, վոր Ռայխենառւն Չեխոսլովակիայի սահմանի վրա տեղավորված գերմանական զորքերի հրամանատարի պոստում նշանակելը տազնապ առաջացրեց չեխոսլովակյան մամուլում։ Չեխոսլովակյան լրագրերի մեծ մասը «Լիբովե նովինի»-ից արտատպեց ռազմական մասնագետ Ստանիսլավ Ֆեստերի գրչին պատկանող այն հոդվածը, վորի մեջ ասվում է․

«Գենեռալ Ռայխենառւն IV դինվորական շրջանի հրամանատար նշանակելը նշանակում է նրա ծառայությամբ բարձրանալը, իսկ մեզ համար (այսինքն Չեխոսլովակիայի համար։ Ա․ Բ․) նշանակում է այն փաստը, վոր մեր հյուսիս-արևմտյան սահմանի հրամանատարը նացիոնալ-սոցիալիստ մի գենեռալ է, վորի համար կուսակցության կամքը հեշտությամբ կարող է հաղթանակել զգաստ ստրատեգիական նկատառումներին»։

Կարծես թե ի հաստատումն այդ բանի՝ Ռայխենառւնի նոր պոստում հանդես գալը հավերժացվեց գերմանական ռազմական ինքնաթիռի ղեմնստրատիվ թռիչքով չեխոսլովակյան տերիտորիայի վրա։ Թռիչքը տեղի յեր ունենում փոքր բարձրության վրա և չէր կարող սխալմամբ առաջացած լինել, վորովհետև

կատարվում եր բացառապէս պարզ յեղանակի ժամանակ:

Այսպիսի տեսք ունեն ռազմական գերատեսչության դժով յեղած հիմնական տեղափոխումները: Ինչպէս տեսնում ենք, նրանք կապված են այն մարդկանց հեռացնելու հետ, ով դժգոհություն եր արտահայտում Հիտլերի ավանտյուրիստական արտաքին քաղաքականությունից: Այս տեղափոխումները հետապնդում են մի նպատակ՝ հեռացնել բոլոր նրանց, ով խանդարում ե մեծ հափշտակողական պատերազմի նախապատրաստութեմն արագացնելուն ու սկսելուն, պատերազմ, վորը ֆաշիստական քաղաքականության գլխավոր նպատակն ե:

Լիովին չվստահելով բանակի հրամանատարությանը, Հիտլերը անհուսալի մարդկանց հեռացնելուց հետո իրեն՝ Գերմանիայի բոլոր զինված ուժերի հրամանատար հայտարարեց:

Ռազմական գերատեսչության դժով յեղած տեղափոխումների հետ մեկտեղ խոշոր փոփոխություններ եյին տեղի ունենում արտաքին գործերի մինիստրության մեջ: Պաշտոնաթող յեղած՝ արտաքին գործերի մինիստր Նեյրատի փոխարեն այդ պոստում նշանակված ե Անգլիայի նախկին գեսպան Ռիբբենտրոպը: Ռիբբենտրոպի անունը լավ հայտնի յե ընթերցող հասարակությանը: Բոլորը հիշում են նրա ակտիվ դերը գերման-ճապոնական ռազմական դաշինքի այսպէս կոչված հակակոմինտերնական պակտը կնքելու մեջ: Այդ այն Ռիբբենտրոպն ե, վորը Գերմանիայի անունից ստորագրեց Իտալիան այդ ռազմական դաշինքին միացնելու պայմանագրի տակ: Այդ նա յե, վոր



մասնակցելով չմիջամտելու կոմիտեյի մեջ, ամեն կերպ վիժեցնում եր այդ կոմիտեյի աշխատանքը, Խաչանիայի ինտերվենտների գործողությունները հեշտացնելու համար:

Ռիբբենտրոպի նշանակումը գերմանական արտաքին քաղաքականության ագրեսիվության նոր ուժեղացում է նշանակում:

Խորհրդային Միության աշխատավորները հաշվի կառնեն, իհարկե, բոլոր այն հետևանքները, վորոնցով կարող է ուղեկցվել արտաքին գործերի գերմանական մինիստրության ղեկավարության այդ փոփոխումը:

Կարևոր փաստ է նույնպես գերմանական դեսպանների հետևանքումը յերեք յերկրներին՝ Խալիլայից, Ճապոնիայից ու Ավստրիայից, վորոնց հետ Գերմանիան ակտիվ դիպլոմատիական հարաբերությունների մեջ է գտնվում: Նրանց հետևանքումը նույնպես կապում են այն բանի հետ, վոր նրանք վոչ-բավականաչափ ակտիվություն հանդես բերեցին արտաքին քաղաքականության մեջ ամենից ավելի ագրեսիվ գիծ իրականացնելու մեջ:

Արտաքին գործերի մինիստրության մեջ յեղած անձնական տեղափոխումների հետ միաժամանակ հաստատված է ևս մեկ, նորություն Գերմանիայի արտաքին քաղաքականության ղեկավարության մեջ: Հիտլերին կից ստեղծվել է «գաղտնի խորհուրդ» արտաքին քաղաքականության հարցերի շուրջը: Այդ «գաղտնի խորհուրդի» կազմի մեջ՝ արտաքին գործերի մինիստրության պաշտոնեյական անձանց հետ մեկտեղ մտցված են Փաշիստական կուսակցության ղեկավար-

ներ՝ Հեսսը, Գյոթլինգը, Գեբբելսը և ռազմական հրամանատարութեան յերեք ներկայացուցիչներ՝ Կեյտելը, Բրաուխիչը, Ռեդերը:

Արտաքին քաղաքականութեան գործերի «գաղտնի խորհրդում» ռազմական հրամանատարութեան յերեք ներկայացուցիչներին մտցնելը առանձնապէս ե ընդգծում Գերմանիայում տեղի ունեցող դեպքերի իմաստը: Այդ յերեք գններալներին խորհուրդ մտցնելը կոմպրոմիսի հասարակ փորձի և ռայխսպլերի ու Հիտլերի միջև յեղած խախտված կոնտակտի վերականգնում չէ, ինչպէս այդ ջանքում են բացատրել ոտարերկրյա միջանի լրագրեր: Այդ ամենից առաջ վկայում է, վոր Հիտլերի արտաքին քաղաքականութիւնը դառնում է ե՛լ ավելի ագրեսիվ, ե՛լ ավելի յե յենթարկված պատերազմի նախապատրաստման գործին:

Հենց նույն նպատակը, այն ե՛, յերկրի ամբողջ տնտեսական-քաղաքական կյանքը պատերազմի նախապատրաստման գործին յենթարկելը, հետապնդում են տնտեսութեան միջխտրութեան մեջ կատարված թե տեղափոխումները, թե վերակազմումները: Ինչպէս հայտնի յե, 1937 թվին, Շախտի հրաժարեցումից հետո, տնտեսութեան միջխտր նշանակվեց Ֆուսկը, վորը մինչ այդ պրոպագանդայի միջխտրութեան պետական քարտուղարն էր: Տնտեսական քաղաքականութեան ընդաւառում նա աչքի ընկավ վորպէս ավտարկիայի կողմնակից: Ինչպէս պնդում է հավաստի ժուռնալ «Դի նոյե վելտրյունեն»-ն 1938 թ. փետրվարի 10-ի համարում, Գերմանիայի արդյունաբերական չըջանները անբարյաղակամորեն դիմավորեցին Ֆուսկի նշանակումը վորպէս տնտեսութեան միջխտր և բողոքում էյին այդ



նշանակման դեմ: Ֆոնսկը պետք է իր պարտականու-  
թյունների կատարմանն անցներ 1938 թ. հունվարի  
15-ին, իսկ իսկապես անցավ միայն 1938 թվի փետրե-  
վարի 4-ին: Շախտին հեռացնելու մոմենտից մինչև  
փետրվարի 5-ը տնտեսության մինիստրությունը վա-  
րում էր Գյորինգը: Ոտարերկրյա միջանի լրագրերի  
կարծիքով Ֆոնսկին հետազայում ևս նախորոշված էր  
«դիկտատոր Գյորինգի տեղակալի» դերը: Շախտին  
հեռացնելուց մինչև փետրվարի 4-ը Գյորինգը «կար-  
գավորում էր» տնտեսության մինիստրությունը:  
Շախտի որով աշխատող՝ այդ մինիստրության նախ-  
կին չինովնիկների մի մեծ քանակության առաջարկվեց  
հրաժարական տալ: Նրանց փոխարեն տնտեսության  
մինիստրության բաժինների ու յենթաբաժինների  
գլուխ կանգնեցին գլխավորապես ռազմական մասնա-  
գետները: Ահավասիկ նոր նշանակումներից միջա-  
նիսը:

Արդյունաբերական բաժին (հումքային և արհես-  
տագործական արտադրանք): Պետը ավիացիայի գե-  
ներալ-մայոր Լերն է:

Լեռնային արդյունաբերության, յերկաթի, եներ-  
գետիկայի բաժին: Պետը գեներալ-մայոր Փոն Հան-  
նեկենն է:

Արտաքին առևտրի, դեվիզների, եքսպորտի բա-  
ժին: Մինիստրիալ դիրեկտորն է պաշտոնաթող յե-  
ղած մայոր Փոն Յագվիտցը:

Տնտեսական շինարարության (հետազոտություն,  
պլանավորում, «քառամյա պլանի» կատարում) կա-  
սերական բյուրո: Գլխավորում է գլխավոր շտաբի  
մայոր ինժեներ Յիմատիսը:

Այդ բյուրոյի բաժինը (սլանավորում եւ սլանի կիրառում): Գլխավորում եւ մայոր ինժեներ Գեյստը:

Այս նշանակումները բացահայտորեն ցույց են տալիս վերակազմության նպատակը—տնտեսությունը նախապատրաստվող պատերազմի պահանջմունքներին հարմարեցնելը: Տնտեսության մինիստրության վերակազմության բնույթը հենց ասում եւ այն մասին, վոր Գերմանիայի ամբողջ տնտեսությունը դրվում ե ի սպաս պատերազմին:

Սպառազինումների հետեւից ընկած այս ավանտյուրիստական քաղաքականությունը, ամբողջ տնտեսությունը պատերազմի նպատակներին յենթարկելն ի վնաս տնտեսական զարգացման՝ եւ ավելի մեծ դժգոհություն ե առաջացնում Գերմանիայի նույնիսկ կառավարող շրջաններում: Հիտլերը ջանում ե ազատվել այդ դժգոհությունից դժգոհներին հեռացնելով ու ձերբակալելով:

Նույնիսկ բուրժուական դիտողները ընդունում են, վոր դեպքերը Գերմանիայում՝ նրանում սրվող հակասությունների ցուցանիշն են հանդիսանում: «Գերմանիան հանգիստ ե ինչպես լցված թնդանոթը»,— նշում են նրանք:

\* \* \*

1938 թ. հունվար—փետրվարին Գերմանիայում տեղի ունեցող դեպքերը ֆաշիստական դիկտատուրայի հնգամյա գոյության անխուսափելի հետեւանքն են:

Փաշիստական դիկտատուրան կատարում ե խոշոր բուրժուազիայի ամենից ավելի ռեակցիոն, իմպերիալիստական շրջանների կամքը: Բայց բուրժուազիայի



առանձին խավերի մեջ ել աճում ե տազնապը Փաշիս-տական տիրապետութեան հինգ տարվա հանրագումարներին առթիւ, և այն դժվարութիւնների առթիւ, վորոնց հանգեցրեց այդ տիրապետութիւնը: Փաշիս-տական Գերմանիայում առանձին ղեկավար խմբերի միջև յեղած պայքարն արտացոլում ե բուրժուազիայի տազնապն այդ դժվարութիւնների առթիւ և այդ դժվարութիւններից **յեւք փնտռելու վորոնումները:**

Փաշիզմի ղեկավար լագերում այսպես կոչված չափավոր հոսանքը, վորն այժմ ջախջախւել ե Հիտլերի կողմից,—Շախտը, Յրիչը և ուրիշները,—արտահայտում եր այն հետեանքների յերկուղը, վորոնց կարող ե հանգեցնել Գերմանիայի ավանտյուրիստական քաղաքականութիւնը: Քանի վոր այն Փոկուսը, վորի մեջ կենտրոնացվել ե ամբողջ Փաշիստական քաղաքականութիւնը, ռազմական ավանտյուրաների խտորեն արտահայտված քաղաքականութիւնն և հանգիստանում, ապա այդ կետի դեմ եր, առաջին հերթին, հենց ուղղված «չափավոր հոսանքի» դժգոհութիւնը:

Այժմ, այդ հոսանքի ներկայացուցիչներին հեռացնելուց հետո, Հիտլերը հեշտացրեց մոտ ժամանակում ռազմական ավանտյուրաների քաղաքականութեան հետագա զարգացումը: Այս բանն անխուսափելիորեն պետք ե հանգեցնի Փաշիստական Գերմանիայում հակասութիւնների հետագա աճմանը:

Այդ պատճառով հենց ղեկավար վերնախավում յեղած դժգոհների հետ տեսած դատաստանը և դրա առաջացրած նշանակելի տեղափոխումները գերմանական կառավարութեան մեջ՝ այդ դժվարութիւնների

մերացման ցուցանիշ վոչ մի կերպ չեն հանդիսանում: Դժգոհները հետ տեսած դատաստանի այն մեթոդը, վորին դիմեց Հիտլերը, լիկվիդացիայի չի յենթարկում այդ դժգոհության պատճառները: Ընդհակառակը, միանգամայն անխուսափելիորեն ստեղծվում են պայմաններ հետագայում դժգոհությունների աճման համար: Փաշիստական դիկտատուրայի բազանքանի գնում նեղանում է:

Այս է Գերմանիայի հունվար-փետրվարյան դեպքերից արած հիմնական յեզրակացությունը:

Յերկրորդ յեզրակացությունն այս դեպքերից այն է, վոր Փաշիստական կառավարությունը, կատարելով գերմանական բուրժուազիայի ամենից ավելի ազդեցիկ խավերի կամքը, «չափավոր հոսանքի» հետ հաշիվը տեսնելով իր չըջապատում, ել ավելի մեծ յեռանդով կսկսի նախապատրաստել «ամբողջական» պատերազմը: Այս ճանապարհին գերմանական Փաշիստները յերկրի ներսում աճող դժվարություններից յիւք են փնտռում և ել ավելի կփնտռեն:

Ռազմական մինիստրության, արտաքին գործերի մինիստրության և տնտեսության մինիստրության բոլոր կատարված վերակազմումները, բոլոր այս անձնական տեղափոխումները մի նպատակ են հետապնդում՝ ուժեղացնել պատերազմի նախապատրաստությունը:

Գերմանիայի կոմունիստական կուսակցության ԿԿ-ն գերմանական ժողովրդին ուղղած իր դիմումի մեջ այսպես է գնահատում վերջին դեպքերը Գերմանիայում.

«Փետրվարի 4-ի դեպքերը ծայրահեղ տագնապա-



նշան և գերմանական ժողովրդի համար: Հիտլերի կառավարութիւնը նոր ռազմական յեղութիւններ և պատերազմում: Այդ կառավարութիւնը աճող դժվարութիւններից և յերկրի ներսում Փաշիստական ռեժիմից յեղած մասսայական դժգոհութիւնից յէլք և փնտռում դրսի ռազմական ավանտյուրաների մեջ: Պատերազմի Փաշիստական կուսակցութիւնը ձգտում և պետական սպարաափից հեռացնել աշն ամենը, ինչ դեռ նրա ավանտյուրիստական ռազմական քաղաքականութեանը արգելք և ծառայել: Հիտլերն ու Գյորինգը անձամբ իրենց վրա յեն վերցնում ռազմական մեքենայի դեկավարութիւնը...

Պետք և սպասել ե՛լ ավելի լկաի վրտնձգութիւններ Աւստրիայի, Չեխոսլովակիայի վրա... Սանձը կտրած Հիտլերը սլանում և դեպի պատերազմի գիրկը...»:

Գերմանական կոմկուսակցութեան աշս նախագուշակութիւններն արդեն հաստատում են դտնում իրականում: Գերմանական Փաշիզմի ագրեսիվութեան աճման վառ արտահայտութիւններից մեկն են 1938 թ. հենց փետրվարին իսկ ծավալված դեպքերը:

\* \* \*

Փետրվարի 5-ի դեպքերից անմիջապես հետո աշխարհը ստանում և ակնառու ապացույցն աշն բանի, թէ ինչ են նշանակում այդ դեպքերը: Գերազանցելով «չափավոր» ելեմենտներին՝ ամենից ավելի ագրեսիվ ավանտյուրիստական Փաշիստական կլիկը ուժեղացրած տեմպով ձեռնամուխ և լինում գերմանական Փաշիզմի ագրեսիվ պլանների հետագա կատարմանը: Առաջին հարվածներից մեկն ուղղված և Աւստրիայի դեմ:

Մարտի 11-ի լույս 12-ի գիշերը Ավստրիա ներ-  
խուժեց գերմանական բանակը՝ թվով՝ 200-ից մինչև  
240 հազար մարդ։ Ավստրիան ընկավ Հիտլերի սապո-  
գի տակ և դադարեց վորպես ինքնուրույն պետություն  
գոյություն ունենալուց։

Իսկ ի՞նչ կերպ Փաշխտական Գերմանիան իրա-  
գործեց Ավստրիայի զավթումը։

Փետրվարի 12-ին ավստրիական կանցլեր (կառա-  
վարության գլուխը) Շուշնիգը Հիտլերի կողմից շտապ  
կանչվեց Բերխտեսգադեն, Հիտլերի ռեզիդենցիան։  
Շուշնիգի ու Հիտլերի միջև յեղած բանակցություննե-  
րին մասնակցում էին նոր նշանակված Փաշխտական  
գեներալներ՝ Կեյտելն ու Ռայխսենաուն, ինչպես նաև  
արտաքին գործերի մինիստր՝ Ռիբբենտրոպը։ «Բարե-  
կամական» զրույցների հանրազումարում Շուշնիգին  
առաջարկվեց անհապաղ վերակազմել ավստրիական  
կառավարությունը, նրա կազմի մեջ մտցնելով գերմա-  
նական Փաշիգմի հովանավորյալներին։ Այդ առաջար-  
կը կրում էր ուլտիմատումի բնույթ, ուլտիմատում,  
վորի ժամկետը լրանում էր փետրվարի 16-ին, յերե-  
կոյան ժամը 6-ին։ Շուշնիգը յենթարկվեց Հիտլերա-  
կանների ճնշումին և վիեննա վերադառնալուն պես  
կարիների նիստ գումարեց։ Փետրվարի 15-ին յերկա-  
րատե քննարկումից հետո կազմվեց մինիստրների նոր  
ցուցակ, վորը անմիջապես հրապարակվեց լրագրե-  
րում։ Սակայն հենց նույն օրը հայտնի դարձավ, վոր  
Հիտլերի ճնշման ներքո կազմած նոր կառավարու-  
թյունն էլ նրա լիակատար հավանությունը չգտավ,  
ուստի և կառավարության կազմի ցուցակը վոջնչաց-  
վում է։



Իր բացասական վերաբերմունքը դեպի կառավարութեան կազմը Հիտլերն արտահայտեց բավականին պարզ՝ կերպով և անպատկառօրէն։ Ավստրիական սահմանի վրա կենտրոնացված գերմանական զորքերը, վորոնք այնտեղ իբր թե ձմեռային մանյովրներ են անում, ազդու ցույց սարքեցին։ Ավստրիական կառավարութիւնը լիովին անձնատուր յեղավ և ընդունեց գերմանական Փաշիստների բոլոր պահանջները։ Կազմվեց նոր կառավարութեան ցուցակ, ընդամին ներքին գործերի մինիստրի պոստում, վորին միաժամանակ յենթարկված են վոստիկանութիւնն ու ժանդարմերիան, նշանակվեց ուղղակի հիտլերյան հովանավոր լալ Արտուր Զէյսս-ինկվարտը։

Բացի կառավարութեան կազմի հարցին վերաբերող ուշախմատումից, Հիտլերն առաջ քաշեց նաև այլ պահանջներ. Ավստրիայում բանտարկված գերմանական Փաշիստների ընդհանուր ամնիստիա, այդ թվում նախկին կանցլեր Դոլֆուսին սպանողներին։ Թույլ տալ Ավստրիա վերադառնալու 30 հազար ավստրիական լեզիոներներին, վորոնք նորերս վերջացրել են Գերմանիայում ռազմական ուսուցումը, հիտլերական բանդաների լեզալիզացիան Ավստրիայում, արգելել ավստրիական մամուլում տեղեկութիւններ հրապարակել՝ Գերմանիայում կաթոլիկներին հալածելու մասին և այլն։ Այս ամենը մեկտեղ վերցրած՝ «սառը խլրտում» հանդիսացավ, ինչպես գրում էր համաշխարհային մամուլը, մի գործարք, վորը հիտլերականները ստիպեցին կնքել ավստրիական բուրժուազիային։ Շուշնիգը, վորին իշխանութեան գլուխ էր դրել Ավստրիական «նացիոնալ» Փաշիզմը, ջանում էր խուսանա-

վել Գերմանիայի և Իտալիայի միջև, բայց վերջի-  
վերջո անձնատուր յեղալ Հիտլերին և համաձայնու-  
թյուն տվեց, համաձայնություն, վորը նշանակելի  
բայլ եր դեպի «յերրորդ կայսրության» կողմից  
Ալստրիային լիովին կլանելը:

Ալստրիայում չգտնվեցին բավականաչափ ուժեր  
Գերմանիայի ագրեսիային հակադդելու համար: Շուշ-  
նիզի կառավարությունը բնավ մտադիր ել չեր հա-  
կադդելու ագրեսիային: Իսկ բանվորական մասսաները  
չնայած վոր ջանում եյին ել դիմադրել Փաշխտական  
ագրեսիային (առանձին ձեռնարկություններում գոր-  
ծադուլներ ու միտինգներ կատարվեցին, մի շարք քա-  
ղաքներում հակաՓաշխտական ազդու ցույցեր տեղի  
ունեցան), բայց բոլոր իրավունքներից զրկված լի-  
նելով, Շուշնիզի կառավարության դաժան հալածան-  
քից հետապնդված, թուլացած լինելով, նրանք ի վի-  
ճակի չեղան խորտակիչ ընդդիմադրություն ցույց  
տալ Փաշխտական հափշտակիչներին: Բոլորը հիշում  
են, թե ինչպես Ալստրիայի Փաշխտական կառավա-  
րությունը ալստրիական բանվորների արյունոտ դա-  
տաստան սարքեց 1934 թ. փետրվարյան մարտերի ժա-  
մանակ: Հետագա տարիներումն ել այդ կառավարու-  
թյունը դաժանորեն պատժում եր աշխատավորներին:  
Հենց դա յեր, վոր թուլացրեց հեղափոխական բան-  
վոր դասակարգի, Ալստրիայի աշխատավորական մաս-  
սաների ուժը:

Հիտլերի փետրվարյան հարձակումը Ալստրիայի  
վրա անսպասելի չեր. այդ հարձակումը պատրաստ-  
վում եր՝ Գերմանիայում Փաշխտաների՝ իշխանության  
զլուխ անցնելու մոմենտից, նպատակ ունենալով ի-



լազործելու այսպես կոչված անշլյուսը, այսինքն Ավստրիան Գերմանիային միացնելը: Գերմանական Ֆաշիստներն արդեն մի քանի տարի առաջ Ավստրիայում ստեղծեցին ռազմական ջոկատներ, վորոնց գերմանական Ֆաշիստները մատակարարում են դրամով, գենքով և այլն: Բավարիայում (Հարավային Գերմանիա) ավստրիական սահմանի մոտակայքում տեղավորվեց այսպես կոչված ավստրիական լեգիոնը, զինված ջոկատներ, վորոնք կազմվել էին Ավստրիայից փախած՝ գերմանական Ֆաշիզմի կողմնակիցներից ու զործակալներից:

Դեռ 1934 թվին գերմանական Ֆաշիստները ջանում էին իրականացնել անշլյուսը: 1934 թ. հունիսի 25-ին ավստրիական հիտլերականների զինված ջոկատները չրջապատեցին կառավարական հիմնարկները Վիեննայում, ներխուժեցին այնտեղ և սպանեցին կանցլեր Դուֆուսին: Մյուս Ֆաշիստական ջոկատները գրավեցին ռադիոկայանը և շտապեցին ամբողջ աշխարհին լուր տալ Դուֆուսի կառավարութանը հրաժարեցում տալու մասին և այն նոր կառավարությամբ փոխարինելը: Սակայն խռովարարությունը չհաջողվեց և մի քանի օրից հետո լիկվիդացիայի յենթարկվեց: Բայց Հիտլերը գինքը վայր չդրեց. քայքայիչ աշխատանքն ամեն ժամանակ շարունակվում եր: Այս տարվա սկզբին յերևան հանվեց հերթական դավադրությունը, վորը պատրաստվել եր Գերմանիայից յեկած յոսեֆումով: Դավադիրների պլանի համաձայն ավստրիական հիտլերականները՝ գերմանական իրենց համախոհների հետ միատեղ պետք և ավստրո-գերմանական սահմանի վրա պրովոկացիոն միջադեպեր սար-

բեյին և մի շարք տեւորիստական ակտեր կատարելին, փորպենսի առիթ տալին գերմանական զորքերին ներխուժելու ավստրիական տերիտորիան:

Ավստրիան զավթելու բազմիցս փորձերի անհաջողութիւնը չչփոթեցրեց Փաշիստական Գերմանիայի պարագլուխներին:

Հիտլերը «սառը խռովութիւնով» չսահմանափակվեց: Բերխտեսդադենի հրամանով կառավարութեան վերակազմով ավստրիական պետութեան ջախջախման սկիզբն եր, Փաշիստական Գերմանիայի նոր ավանտյուրայի սկիզբը:

Գերմանիայից յեկած ցուցումների համաձայն վերջնականապես կապը կտրած ավստրիական հիտլերականները արշավանք գործեցին Գրացի վրա, Շտիրիայի (Ավստրիայի հարավային պրովինցիաներից մէկի) գլխավոր քաղաքի վրա, վորտեղ պետք է հանդես գար Հիտլերի հովանավորչալը, Ավստրիայի ներքին գործերի նոր մինիստր՝ Զեյսս-Ինկվարտը: Այդ արշավանքի ժամանակ Ավստրիայի միջանի քաղաքներում տեղի ունեցան զինված բնդհարումներ բնակչութեան հետ:

Փաշիստական հափշտակիչների լկտի վարմունքը դժգոհութիւն առաջացրեց ավստրիական ժողովրդի լայն մասսաների մեջ: Այդ դժգոհութեան ճնշման տակ Շուլցնիգը վորոշեց ղեկել հանրաքվեյի, վորպէս Ավստրիայի գրավումից առաջացած դժգոհութեան արտահայտման ձեռք: Մարտի 13-ին Շուլցնիգը հանրաքվե նշանակեց ավստրիական անկախութեան մասին յեղած հարցի շուրջը: Բայց Հիտլերը, վորը ինքն եր առաջ խոսում հանրաքվեյի անհրաժեշտութեան մասին, այժմ



վախեցաւ նրա հնարավոր հետեանքներից: Մարտի 10-ին նա իր գործակալներին ցուցում տվեց՝ Ավստրիայում վիժեցնել հանրաքվեն, իսկ մարտի 11-ին, սպառնալով գերմանական զորքերի ներխուժումով Ավստրիա, ուլտիմատում առաջադրեց՝ վերացնել հանրաքվեն և իշխանությունը տալ Զեյսս-Ինկլարտին: Հիտլերի այդ ուլտիմատումը ընդունվեց, հանրաքվեն վերացվեց, Շուլցիգը պաշտոնաթող յեղավ:

Զնայած դրան՝ Հիտլերը այդ նույն օրը իր զորքերը չարժեց ավստրիական սահմանի վրայով: Մարտի լույս 12-ի գիշերը հիտլերականները գրավեցին կառավարական շենքերը: Ստեղծվեց նոր կառավարություն Զեյսս-Ինկլարտի գլխավորությամբ, վորը միաժամանակ ստացավ ներքին զործերի, վոստիկանության ու ռազմական մինիստրի պոստ:

Մարտի 12-ին ավստրիական տերիտորիայի վրայով արդեն թռչում էին գերմանական ռազմածիճները, ինքնաթիռներով տեղավորվում էին գերմանական զորքեր, վորոնք մատակարարված էին հեղացիրներով, ավստրիական քաղաքներում տեղավորվեցին գերմանական մոտո-մեքենայացված մասերը: Այդ նույն օրը Ավստրիա ժամանեց Հիտլերը՝ ռազմական մինիստր Կեյտելի և գեստապոյի պետ Հիմմլերի ուղեկցությամբ:

Ֆաշիստական հափշտակիչները սկսեցին անպատկառ կերպով պատժել ավստրիական ժողովրդին: Յերրորում թաղավորում է չտեսնված տեղոր: Հաշվվում են հազարավոր սպանվածներ, հարյուրավոր ինքնասպանություններ, տասնյակ-հազարավոր ձերբակալվածներ ու համակենտրոնացման ճամբարում նստածներ:

Ավստրիան դադարեց գոյութիւն ունենալ վոր-  
պէս ինքնուրույն, անկախ պետութիւն: Նա վերած-  
վել է մի գերմանական պրովինցիայի, վորտեղ տիրա-  
պետում են Փաշխտական ազդեցութիւնների բանդաները:

Ինչո՞վ բացատրել, վոր Հիտլերի այդ ձեռնար-  
կումը, վորն ուղղված էր Ավստրիան դավթելու հա-  
մար, մի ձեռնարկում, վորն անցյալում միջանի ան-  
գամ պարտութիւն է կրել, հաջողվեց 1938 թ. ին-  
տըրվարին: Դրա պատճառը թաղնված է ներկայիս  
միջազգային իրադրութեան մեջ, Յեվրոպայի կարե-  
վորագույն կապիտալիստական պետութիւնների կող-  
մից ազդեցութիւններն իրախուսելու քաղաքականութեան  
մեջ:

1934 թ. Ավստրիայում խռովարարութիւնը ճշն-  
շելու պատճառներից մեկը հանդիսացավ այն, վոր  
այդ խռովարարութեանը բացասաբար վերաբերվեց  
այն ժամանակ Իտալիան:

Պայքարն Իտալիայի ու Գերմանիայի միջև Ավստ-  
րիայի համար սկսվեց համաշխարհային խմբերիալիս-  
տական պատերազմը վերջանալու հենց մյուս օրը:  
Իտալիան չէր ուզում, վոր Ավստրիան միացվեր Գեր-  
մանիային, վորովհետև այն ժամանակ Գերմանիայի  
սահմանները կհասնէյին ընդհուպ մինչև հարավային  
Տիրոլը (մարդ, վորն առաջ պատկանում էր Ավստրո-  
Հունգարիային), վորը պատերազմից հետո մտցվեց  
Իտալիայի կազմի մեջ: Իսկ Գերմանիան ձգտում է  
զրավել հարավային Տիրոլը այն պատրվակով, թե  
այնտեղ բնակչութեան մի մասը խոսում է գերմանե-  
րեն լեզվով:

Բացի այդ՝ Ավստրիան Գերմանիային միացնելը



վերջինիս ձեռքը հիանալի դիրքեր կտար՝ հետագայում թափանցելու Բալկանները և Հարավ-արևելյան Յեվրոպայի յերկրները, հիանալի ռազմադաշտ՝ ռազմա-ստրատեգիական ճանապարհների ցանցով և ուժեղ զարգացած ծանր արդյունաբերությամբ:

Իր բացասական վերաբերմունքը դեպի 1934 թ. խռովարարութունը Իտալիան արտահայտեց բավականին ակտիվորեն: Նա այդ ժամանակ Ավստրիայի սահմանին մոտեցրեց բազմահազար բանակ, վորը պատրաստ էր մտնել ավստրիական տերիտորիան, վորպեսզի չթողնի Ավստրիայի գրավումը Գերմանիայի կողմից:

Ֆրանսական ժուռնալիստ Ա. Դե Կերելիսը «Եպոկ» լրագրում հիշատակում է այն զրույցը, վորն ինքն ունեցել է Մուսսոլինիի հետ միջանի տարի առաջ:

«Պոսելով անչլյուսի մասին,—գրում է Կերելիսը,—«գուշեն» հայտարարեց, վոր այս հարցը Փաշիգմի համար կենսական հարց է: Իտալիան իր սահմաններում ազատվեց գերմանիզմի պատմական սպառնալիքից, և Փաշիզմը կդավաճաներ իր միսիային, յեթե թույլ տար, վոր այդ սպառնալիքը վերածնվեր:—Յեթե յես նոր կայսրության փոխարեն Հռոմին տայի ամբողջ Աֆրիկան ծայրեծայր, միևնույն է Հռոմը չեր ներիմծ այդ բանը—բացականչեց Մուսսոլինին»:

Իսկ հիմա Իտալիան լռությամբ վավերացնում է դեպքերն Ավստրիայում: Այժմ Մուսսոլինին գերմանական Փաշիզմի խոնարհ ծառան է, նա վողջունի դեկլարացիաներում թաղեց անցյալ տարիների իր պարծենկոտ հայտարարությունները:

Իտալիային, իհարկե, հիմա ել այնքան ցանկալի  
 չէ, վոր անմիջականորեն իր սահմանի մոտ հարևանը  
 Գերմանիան ե: Բայց հիմա նրանք հարկադրված են  
 ղիջումներ անել, նահանջել Գերմանիայի հանդեպ  
 նույնիսկ այնպիսի կարևոր հարցերում, ինչպես  
 ավստրիական հարցը: Ինչո՞ւ ե բացատրվում Իտա-  
 լիայի այդ «գիջողությունը»: Բանն այն ե, վոր վեր-  
 ջին տարիներ ընթացքում Իտալիան վարել ե և վա-  
 րում ե չափազանց ռիսկալիոր ռազմական ավանտյու-  
 րաներ: Հարեչական պատերազմը փաստորեն չի վեր-  
 ջացել. հարեչական ժողովրդին ճնշելը մինչև այժմ  
 ել Իտալիայից խոշոր ուժեր և հսկայական դրամական  
 միջոցներ ե պահանջում, վորպիսիք չունի իտալական  
 ֆաշիստների սպառնալից, դատարկված դանձարանը:  
 Շատ գլխացավանք ու միջոցներ են պահանջում ին-  
 տերվենցիաները Իսպանիայում և Իտալիայի ագրեսիվ  
 քաղաքականությունը, վորն անմիջապես ուղղված ե  
 ընդդեմ Անգլիայի ու Ֆրանսիայի՝ Միջերկրական ծովի  
 վրա: Ռազմական ավանտյուրաների վրա արած ծախ-  
 սերը կատարվում են յերկրի տնտեսական դրուժյունը  
 վատթարացնելու հաշվին, լայն աշխատաւորական  
 մասսաներին կողոպտելու հաշվին: Այս ամենն առաջաց-  
 նում ե իտալական ժողովրդի դժգոհության աճ և ե՛լ  
 ամելի յե շիկացնում ֆաշիստական դիկտատորների  
 վտանգի տակի հողը: Այս հանգամանքներն, ինչպես  
 յերևում ե, թելադրեցին Մուսսոլինիին Ավստրիայի մա-  
 սին յեղած հարցում Գերմանիային ղիջումներ անելու  
 անհրաժեշտությունը, վորպեսզի ապահովված լինի  
 Գերմանիայի պաշտպանությամբ իր ավանտյուրանե-  
 րում՝ այլ կետերում: Ավստրիան այստեղ «մանրուն



գլխով» հանդիսացավ Իտալիայի ու Գերմանիայի միջև յեղած գործարքում:

Այս դեպքերն Ավստրիայում վառ ապացույց են այն բանի, Վոր թույլ յերկրներն համար անհուսալի յե պաշտպանել իր անկախությունը, հենվելով մի Փաշիստական ագրեսորի վրա ընդդեմ մյուսի: Ավստրիայի կողմնորոշումը դեպի Իտալիան, այն հաշիվները, թե կստանա Իտալիայից պաշտպանություն և ոգնություն ընդդեմ Գերմանիայի, հաշիվներ, վորոնք այժմ այնպիսի պարտություն կրեցին, այդ բանի վառ ապացույց են հանդիսանում:

Անգլիան ու Ֆրանսիան ավստրիական դեպքերում գրավում են չմիջամտելու դիրք, վորը ըստ ելության՝ ագրեսորին ուղղակի աջակցություն և հանդիսանում: Բրիտանական կառավարությունը, վորը Փաշիստական պետությունների հետ համաձայնության բացահայտ ուղղությունն և բռնել, այդ դեպքերին վերաբերվեց բացահայտորեն բարյացակամ կերպով: Անգլիական կառավարության պաշտոնական որդան՝ «Թայմս»-ը միանգամայն աներկմտորեն հավանություն և տալիս Գերմանիայի ագրեսիվ քաղաքականությանը: «Թայմս»-ի՝ սույն թվի փետրվարի 17-ի առաջնորդողում մենք գտնում ենք Ավստրիայում՝ գերմանական ագրեսիայի հետևյալ գնահատականը.

«Այնպիսի երսպանսիա, վորը նշանակում է գերմանական՝ վորպես մեծ, բարձր կազմակերպված արդյունաբերական պետության՝ տնտեսական գերազանցության վրա հիմնված գերմանական ազդեցության լայնացում... այդ մտքով առած երսպանսիային Մեծ Բրիտանիան հակազդեցություն չպետք է ցույց տա»:

Չմիջամտելու հենց նույնպիսի դիրք գրավում է, ըստ եյուլթյան, նաև Ֆրանսիան: Այս ամենը Հիտլերին հնարավորութիւն տվեց Ավստրիան գրավելու իրագործմանը ձեռնամուխ լինելու:

Գերմանական Փաշիզմը վոչ-պարզամտորեն երձգտում գրավել Ավստրիան: Այդ յերկիրը նշանակելի բնական հարստութիւններ ունի: Նրա ընդերքը պարունակում են ոգտակար հանածոներ, վորոնք ծառայում են վորպէս հումք ռազմական արդյունաբերության համար՝ քարածուխ, յերկաթ, արծիճ, ցինկ, պղինձ և այլն: Ավստրիայի զարգացած գյուղատնտեսութիւնը պետք է վոչ-անկարևոր ոժանդակութիւն հանդիսանա Փաշիստական Գերմանիայի համար: Հզոր արդյունաբերութիւնը, առաջին հերթին մեքենաշինական ու ռազմական ձեռնարկութիւնները ավելացնում են «մեծ» պատերազմի նախապատրաստումն արագացնելու հնարավորութիւնները, պատերազմ, վորի մասին յերազում է գերմանական Փաշիզմը: Վերջապէս, Ավստրիան լրացուցիչ մարդկային ռեզերվ է Փաշիստական Գերմանիայի համար: Տիրանալով Ավստրիային, Հիտլերը իր բանակը պատերազմի ժամանակ կարող է ավելացնել ևս կես միլիոն մարդով:

Բայց ամենակարևորն այն է, վոր գերմանական Փաշիզմը չի սահմանափակվում միմիայն Ավստրիայի գրավումով: Այդ առաջին քայլն է Կենտրոնական և Հարավ-արևելյան Յեվրոպայի մյուս յերկրների վրա հետագա հարձակման: Անմիջական սպառնալիքի տակ հանդիսացան Չեխոսլովակիան, Հունգարիան, Ռումինիան, բալկանյան յերկրները: Հետագա դեպքերը՝ գերմանական զորքերի շարունակվող Կենտրոնացումը



Հեխոսլովակիայի սահմանի վրա, գերմանական Ֆաշիզմի հենլեյնական գործակալության քայքայիչ աշխատանքը Չեխոսլովակիայում և այլն՝ ցույց տվին, Վոր Հիտլերը իր առաջ խնդիր է դրել՝ գրավել Չեխոսլովակիան, զրկել նրա ժողովուրդներին անկախությունից ու ազատությունից:

Անգլիայի իմպերիալիստական, ռեակցիոն բուրժուազիայի կողմից խրախուսված, միջանի բուրժուական գեմոկրատական պետությունների կողմից ագրեսիայի թողտվությամբ, գերմանական Ֆաշիզմը արագ շրջում է Յեվրոպան՝ պատերազմի ֆազը ձեռքին: Ավստրիական դեպքերի ուրինակը ակնհայտորեն ցույց է տալիս, թե ինչպես անարգել կերպով՝ Ֆաշիստական ագրեսորները շարունակում են զավթումների քաղաքականությունը, պատերազմի քաղաքականությունը:

Պատերազմի սպառնալիքը կախվել է Յեվրոպայի վրա, ամբողջ աշխարհի վրա:

Բոլոր նրանք, ում համար թանգ են խաղաղության շահերը, պետք է հիշեն վերջին ժամանակս կենտրոնական Յեվրոպայում տեղի ունեցած դեպքերի խմատը:

Խորհրդային ժողովուրդը զգաստորեն հաշվի չէ առնում պատերազմի աճող սպառնալիքը:

Խորհրդային կառավարությունը նորերս գարձյալ ընդգծեց իր պատրաստակամությունը՝ հանդես գալ հանուն խաղաղության պաշտպանության: Ռտաբերկրյա ժողովրդատներին ուղղած իր հայտարարության մեջ՝ մարտի 17-ին ընկ. Լիտվինովը խորհրդային կառավարության անունից հայտնեց.

«Այժմյան միջազգային դրությունը բոլոր խաղաղասեր պետությունների առաջ, և հատկապես խոշոր տերությունների առաջ, նրանց պատասխանատվության հարցն է դնում Յեվրոպայի ժողովուրդների հետագա ճակատագրի համար, և վոչ միայն Յեվրոպայի: Խորհրդային կառավարությունը գիտակցում է այդ պատասխանատվության իր բաժինը, նա գիտակցում է նույնպես այն պարտականությունները, վորոնք բղխում են իրեն համար Լիգայի կանոնադրությունից, Բրիտան-Կելլոգի պակտից և փոխադարձ ոգնության պայմանագրերից, վոր կնքել է նա Ֆրանսիայի ու Չեխոսլովակիայի հետ, յես խորհրդային կառավարության անունից կարող եմ հայտարարել, վոր նա իր կողմից առաջիկա պես պատրաստ է մասնակցելու կոլեկտիվային գործողություններին, վորոնք կվորոշվեն իրեն հետ մեկտեղ և վորոնք նպատակ կունենային դադարեցնելու ագրեսիայի հետագա զարգացումը և վերացնելու նոր համաշխարհային սպանդի աճող վտանգը: Խորհրդային կառավարությունը համաձայն է Ազգերի Լիգայում կամ նրանից դուրս մյուս տերությունների հետ միասին անմիջապես քննության առնել հանգամանքների թելադրած պրակտիկ միջոցառումները: Վաղը կարող է արդեն ուշ լինել, բայց այսօր դրա ժամանակը դեռ չի անցել, յեթե բոլոր պետությունները, հատկապես մեծ տերությունները, ամուր աներկմիտ դիրք գրավեն՝ խաղաղությունը կոլեկտիվ կերպով փրկելու պրոբլեմի նկատմամբ»:

Խաղաղության բոլոր բարեկամների կողմից բերկրանքով ընդունված այս հայտարարությունը մի անգամ ևս ընդգծեց ԽՍՀՄ դերը՝ վորպես ավանդարդի՝



Ֆաշիստական ագրեսորների դեմ մղվող պայքարում,  
հանուն խաղաղության ու ժողովուրդների ազատու-  
թյան:

ԽՍՀՄ քաղաքականությունն անփոփոխ կերպով  
հանդիսացել և է կհանդիսանա խաղաղության քաղա-  
քականություն, քաղաքականություն՝ ակտիվորեն  
պաշտպանելու բոլոր նրանց, ովքեր իրականում պայ-  
քարում են սպառնացող պատերազմի դեմ:

Դրա հետ մեկտեղ մենք այսուհետև ել կամրաց-  
նենք խորհրդային Միության պաշտպանունակությու-  
նը, վորպեսզի պատերազմի վրչ մի սպառնալիք մեզ  
վտանգավոր չլինի:



Թարգմ. Ռուգան Վարդապետյան  
Խմբագիր Վ. Փինաչյան  
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան  
Սրբագրիչ Հ. Մանվելյան  
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

---

Գլավիտի լիազոր № Կ.—3286, հրատ. № 576

Պատվեր № 89, Տիրաժ 5.000

Հանձնված է արտադրության 13/V 1938 թ.

Ստորագրված է տպագրելու 27/V 1938 թ.

Գինը 45 Լ.

---

Պետհրատ—Քաղաքական գրականության հրատարակչության  
տպարան, Յերեան, Ալավերդյան № 65




ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0035850

ԳԻՆԸ 45 Կ.

309



А. БУЗДЕС

СОБЫТИЯ В ГЕРМАНИИ  
И АВСТРИИ

Армгиз—Издательство полит. литературы  
Ереван, 1938